

սէն կը ծանուցանէ. թէ թուրքերը Կ.Պոլսոյ
Զաքարիա Պատրիարքը պաշտօնանկ ըրին:

1633 268.3 (29 Օգ.): Կը ծանուցուի
որ Պաղտասար, Կ.Պոլսոյ գաղղիական դեսպանին
հայ թարգմանը կը գրէ, թէ Պոլսոյ Հայերը
40 talaris կերցընելով թուրք տէրութեան՝
պաշտօնանկ ըրին Զաքարիա Պատրիարքը՝ Հռո-
մայ Ս. Եկեղեցւոյ հետ միութեան մէջ ըլլալուն
համար:

1634 14.5 (30 Յունուար): Կարդա-
ցուեցաւ Յովհաննէս Մոլինիի նամակը՝ Պոլսոյ
Հայոց նոր Պատրիարքի մասին՝ որ Հռոմայ
Ս. Քահանայապետներուն ամենաոխերիմ թշնա-
մին է, Առաքեալներու կանոնները չի հաւնիր
եւ իւր հաճոյից համեմատ նորանոր կանոններ կը
հրատարակէ:

1635 334.2 (12 Նոյ.): Կը ծանուցուի,
թէ Պոլսէն գրուածներուն համեմատ, Բ. Դուռը
հրամայած է ընդդէմ Հայոց, որ քառասուն
տարիէ ի վեր Պոլիս բնակիլ սկսող Հայեր մեկ-
նին եւ երթան Ասիա բնակին. կ'ըսուի թէ ասոնք
100.000 հոգի ըլլալու են:

1637 288.21 (11 Մայ.): Կը կարդա-
ցուին՝ Fr. Aug. Աբբեպ.ի ի Պարսկաստան,
Կ.Պոլսոյ Լատին վիքարին եւ Յովհ. Մոլինի
հայուն նամակները նկատմամբ Fr. Paulus Pi-
romal Դոմինիկեանի եւ անոր վարքին ի Հայաս-
տան Հայոց Զաքարիա Պատրիարքին քով:
Ս. Ժողովը կ'որոշէ նորոգել նոյն Աբբեպ.ին
տրուած արտօնութիւնները, վերստին Պալլիում